



102. ԻՐԵՔ ՎՃԵՍԿԵ ՍԱՐ

Մին մարթու, մինզյել մին կնքան իրեք տղա յա ինհամ։ Տղեց մըծանում ըն, փսակվում, հորը նաև մորն անա ճոկվում, օրիշ տղեղ ապրում։ Մըրթը կնեզյ պըռավում ըն, կարում լըն հիրանց պահեն։ Կնեզյը միշտ նըղսըրտվում ա, մարթն ասում ա. — Նըղսըրտվումիլ, դուզվումը իրեք վրեսկե սար օնըեմ։ Կնեզյը ամմեն հինչին տիմանում ա, պըրկըսոթունը լոխ տանում, մարթն էլ առաջ վա մնան սըերտ ա տամ, ըրխըյինցնում։

Մին օր էտ հլիվուրին սուդան ծեն ըն տամ, տա քյինամ ա, տըհսնում ուրան իրեք տղեքը սուդեն հըյաթումը վրեննը կացած, ուրան ըն եշում։ Հըրցնում ա, թա էս հինչ խա՞բար ա, խեր ա՞, թա՞ շառ Տղեքյն ասում ըն. — Մըղետե խեր ա, քըզետե գյուղում շընք Հարը խոսում լի, նի յա մննում սուդը, սուդյան հլիվուրին ասում ա, վրեք ուրան տղեքյը կրենզյատ ըն ըրաւ, թա ճուկվելիս հարն հիրանց վրեսկան փայ լի առովալ, ասում ըն իրեք վրեսկե սար օնըես, մհհենզյ լոխ պիտի կյիրվի, ասըե, տըհսնանը հի՞շտեղ ա քու վրեսկետ Հլիվուրն ասում ա. — Սուդն ապրած կենա, ես իմ վրեսկե սարերըս իմ տղորանցըս ըմ հաշկ ըրաւ, մեհենզյ պենան տոկս ա կյամ, վրեք իրեք կտողնու քշն օնըեմ։

